

Ինչպես չլինել մաքսիմալիստ

Մաքսիմալիստների համար կյանքում սխալները տեղ չունեն, այդ պատճառով նրանք ի վերջո հիասթափվում են թե՛ իրենցից, թե՛ ուրիշներից: Մաքսիմալիստական հակումներ ունե՞ս: Եթե այո, փորձիր հետևյալը:

1 ԲՆՈՐՈՇԻՐ ԽՆԴԻՐԸ

Մտածիր, թե որ ոլորտում է հավանականությունն ավելի մեծ, որ դու կարտահայտես մաքսիմալիստական հակումներդ:



ԴԴՐՈՑ

Եթե ամենաբարձր գնահատականից մեկ միավոր ցածր ես ստանում, դու քեզ կտրված ես զգում:



ՏՈՒՆ

Քո սենյակում ամեն ինչ պետք է միշտ իր տեղում լինի: Եթե նույնիսկ մի առարկա իր տեղում չէ, դու նյարդայնանում ես:



ԸՆԿԵՐԱԿԱՆ ՓՈԽՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դու չես կարողանում համբերությամբ տանել ուրիշների սխալները, հատկապես նրանց սխալները, ում քեզ մտերիմ ես համարում:



ԱՅԼ

Իսկ հիմա մտածիր քո նշած ոլորտի մասին:

Ի՞նչ կերպ(եր)ով ես մաքսիմալիստական հակումներ դրսևորում այդ ոլորտում:

2 ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ ՈՒՆԵՑԻՐ

Աստվածաշունչն ասում է, որ «վերին իմաստությունը նախևառաջ... խոհեն» է (Հակոբոս 3:17): Քո նշած ոլորտում ինչպե՞ս կարող ես ավելի խոհեն ակնկալիքներ ունենալ ինքդ քեզնից (կամ ուրիշներից):

► **Փոխանակ**

► **Կարող եմ**



3 ԸՆՏՐԻՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՀԱՄԱՐԸ

Աստվածաշնչյան ո՞ր համարն է ավելի շատ կիրառելի քո իրավիճակում:

«Աստու՛ւ հետ համեստությամբ քայլիր» (Միքիա 6:8):

«Եթե՛ս դու, ո՛վ Յահ, անօրենությունները զննես, Եհո՛վա, ո՛վ կարող է կանգնել» (Սաղմոս 130:3):

«Երկրի վրա ոչ մի արդար մարդ չկա, որ միայն բարիք անի ու մեղք չգործի» (Ժողովող 7:20):

«Բոլորը մեղք գործեցին ու չհասան Աստու՛ւ փառքին» (Հոռմեացիներ 3:23):

«Թող ձեր խոհեմությունը հայտնի լինի բոլոր մարդկանց» (Փիլիպպեցիներ 4:5):

Ինչպե՞ս կարող է ընտրածդ համարը օգնել քեզ պայքարելու մաքսիմալիզմի դեմ:

4

ՄՏԱԾԻՐ, ԹԵ ՈՒՄ ԿՑԱՆԿԱՆԱՍ ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼ

Ո՞վ է քեզ համար խոհեմության հարցում ընդօրինակման արժանի անձնավորություն և ինչո՞ւ:



«Երբ զգում եմ, որ մաքսիմալիստական հակումներ եմ դրսևորում, փորձում եմ մտածել այն մարդկանց մասին, որոնցով հիանում եմ: Պատճառներից մեկը, թե ինչու եմ հիանում նրանցով, այն է, որ նրանք այնպիսի մթնոլորտ են ստեղծում, որ նրանց շրջապատում ես ինձ լավ եմ զգում: Ուզում եմ, որ ուրիշները հենց այդպես զգան իմ շրջապատում, և դա ինձ վճռականությամբ է լցնում, որ հեռու վանեմ մաքսիմալիզմը» (Աննա):



5

ՆՊԱՏԱԿ ԴԻՐ

Ի՞նչ նպատակ կարող ես դնել մաքսիմալիզմի դեմ քո պայքարում:

«Եթե որևէ բան քո ծրագրածի համաձայն չի լինում, ասա ինքդ քեզ, որ արել ես քո լավագույնը: Կենտրոնացիր լավ բանի վրա: Յուրաքանչյուր սխալ համարիլի նոր բան սովորելու հնարավորություն» (Քերա):